

ՀԱՄԱՐՉԱԿ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյանի ծննդյան 100-ամյակի առիթով*

Հայոց նոր պատմության հիմնահարցերի վերաբերյալ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի հարցադրումներն ու մեկնաբանությունները խորհրդահայ պատմագրության համար ունեցել են ուղենշային նշանակություն՝ իրենց նորովի մոտեցումներով, դրանք առաջադրելու և լուծելու զարմանալի պարզությամբ, ինչը պատմական ճշմարտության բացահայտման երաշխիքն է: Նրա հետազոտությունների՝ հայ պատմագիտության զարգացման հետագա ընթացքի վրա թողած խոր ազդեցությունը ամենից առաջ պայմանավորված էր արևմտահայության 19-րդ դարի 2-րդ կեսի և 20-րդ դարի առաջին տասնամյակների պատմության գիտական ուսումնասիրության գործում դեռևս ստալինյան շրջանում ստանձնած առաջամարտիկի դերով:

Այս բնագավառում, սկսած 1946 թվականից, երբ Մ. Ներսիսյանը պաշտպանեց «**Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական դեսպոտիզմի դեմ (1850-1870 թթ.)**» դոկտորական ատենախոսությունը, մա խորհրդահայ պատմագիտության մեջ մի յուրահատուկ հեղաշրջման սկիզբը դրեց՝ նախաձեռնելով երեք հիմնահարցերի գիտական ուսումնասիրությունը.

առաջին՝ օսմանյան Թուրքիայի, որպես պետության, բռնակալական բնույթի բացահայտումը,

երկրորդ՝ հայատակ ազգերի, մասնավորապես՝ հայերի ազատագրական պայքարի անխուսափելիության և օրինաչափության վերհանումն ու տեսական հիմնավորումը,

երրորդ՝ օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության մասին վկայող փաստաթղթերի հավաքումն ու տպագրությունը:

1946 թ. Մ. Ներսիսյանի պաշտպանած դոկտորական ատենախոսությունը որպես աշխատություն հնարավոր եղավ հրատարակել շատ ավելի ուշ՝ 1955 թվականին, երբ ստեղծվել էին այն համեմատաբար նպաստավոր քաղաքական պայմանները, որոնք «հալոցք» անվանումը ստացան: Ուստի այսօր հարկ է արժանին մատուցել ականավոր պատմաբանին՝ 1946-ին ճշմարտության ժլատ շողը գորել լուսարձակի վերածելու անօրինակ հանդգնության համար:

Հիրավի, դեռևս մնում էին կարծրամտությունը, մոլուցքի և կասկածի թանձր շերտերը քաղաքականացված մտածողության ծալքերում, որոնց սպառնալիքը ձևակերպված է հայտնի ասացվածքում՝ *Trita via recedere periculosum* («Վտանգավոր է տրորված ճանապարհից նահանջել»):

Խորհրդահայ պատմագրության համար շրջադարձային նշանակություն ունեցած «**Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ**

* Ընդունվել է տպագրության 29.11. 2010:

(1850-1870 թթ.)» հիմնարար աշխատությունը հատկորեն արձանագրեց հայ ազատագրական պայքարի պատմականորեն օրինաչափ լինելու փաստը, որով առաջին ճեղքը բացվեց ժամանակին իշխող քաղաքական մտակաղապարների մեջ: Մ. Ներսիսյանի աշխատությունը երկու խոշոր նորություն էր բերում խորհրդային պատմագիտության մեջ. **նախ**՝ նրանում առաջադրված հիմնահարցերի հստակ և գիտականորեն հիմնավորված թեմատիկ բովանդակությունը պարունակում էր թուրքական բռնակալության և դրա դեմ ուղղված հայ ազատագրական պայքարի գիտական գնահատականները: **Այնուհետև**՝ գիտնականը տալիս էր ազատագրական շարժման նկատմամբ եվրոպական տերությունների և Ռուսաստանի դիրքորոշումների բնութագրերը: Ուշագրավ էր, մասնավորապես, գրքի առաջաբանը, որը Մ. Ներսիսյանի մոտեցումների և հետազոտական սկզբունքների համոզիչ հիմնավորումը լինելուց բացի, համարձակ բանավեճ էր օսմանյան Թուրքիայի բռնակալության նկարագիրն ամեն կերպ քողարկելու և հայ ազատագրական շարժումը «ազգայնականության» բուլշևիկյան մեկնաբանության մեջ խցկելու ջանքերի դեմ:

Ոչ պակաս կարևոր էր նաև այն, որ Մ. Ներսիսյանը ազատագրական շարժումը համարում էր թուրքական բռնակալության բարբարոսությունների այն քննական հակադեմոստրացիան, որը նույն պատմաշրջանում՝ 19 - 20-րդ դարերում, չհասկանալի էր հայտ գալ նաև Բուլղարիայում, Սերբիայում, Հունաստանում, Ռումինիայում և Արաբական աշխարհում: Դրանով հայ ազատագրական շարժումը դիտարկվում էր իբրև Օսմանյան կայսրության լծի տակ ճնշված ժողովուրդների մղած նույնբովանդակ պայքարի մեկ օղակը:

Նկատենք, որ Մ. Ներսիսյանը ազգային ազատագրական շարժումների առաջադիմական բնույթը հիմնավորում էր նաև մարքսիզմի դասականների մտքերով, որոնք այսօր էլ կարևոր նշանակություն ունեն ազգերի ինքնորոշման գաղափարի հիմնավորման և հատկապես՝ օսմանյան Թուրքիայի բռնակալական էությունը բացահայտելու տեսանկյունից:

Ելնելով այս հիմնական հաստատումներից, Մ. Ներսիսյանը կարողացավ հերքել հակագիտական այն հայեցակարգը, թե իբր՝ 1850-1870-ական թթ. հայությունը ազատագրական պայքար չի մղել թուրքական բռնակալության դեմ, տեսակետ, որն այս կամ այն տարբերակով արտահայտել են «Հայաստանի և Հայկական հարցի մասին... գրող արևմտաեվրոպական պաշտոնական շրջանների ներկայացուցիչները, ինչպես նաև գործին անտեղյակ մի շարք ռուս և հայ հեղինակներ»¹: Նա հստակորեն սահմանեց, որ «Մուլթանական Թուրքիայի դեմ ուղղված ազատագրական պայքարը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության կարևոր դրվագներից մեկը»²: Մրանով ուղիներ էին հարթվում մինչ այդ բազում արգելքների հանդիպած գիտական հիմնահարցի ավելի համակողմանի ուսումնասիրության համար:

Իր աշխատության մեջ Մ. Ներսիսյանը միանգամայն իրավացիորեն քննադատեց Լեոյի խորհրդային շրջանի աշխատություններում, հատկապես «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»³ երկհատորյակի մեջ Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումներին տրված գնահատական-

1 Չայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, Եր., 1955, էջ 16:

2 Նույն տեղում, էջ 18:

3 Տես Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Պարիզ, տպ. Պահիր եղբարց, 1934:

ները: Լեոն դրանք համարել էր դրսից բերված քարոզչության, ազատագրական գաղափարների «արհեստական ներմուծման» արդյունք:

Պետք է նշել նաև, որ խորհրդահայ պատմագիտության մեջ Մ. Ներսիսյանն առաջինը հերքեց թուրքական պատմագիտության շինծու դրույթները արևմտահայերի տնտեսական բարվոք վիճակի և որպես դրա արդյունք՝ նրանց անմուռն և հնազանդ վարքագծի մասին: Շատ կարևոր էր նաև Մ. Ներսիսյանի կատարած այն վերապահությունը, որ հայերի մղած ազատագրական շարժման պատմությունն իրականում դեռևս չի դարձել մարքսիստական ուսումնասիրության առարկա և որի ժամանակն արդեն հասունացել է: Դիտողությունը կոչված էր կանխելու հնի մոլեռանդ պաշտպանների շարունակվող առարկությունները, մյուս կողմից՝ պետք է հիմնավորեր խորհրդային իրականության մեջ այս թեմայով նորանոր աշխատություններ ստեղծելու նպատակն ու իմաստը:

Մարքսիզմի տեսանկյունից ըմբերանելով իր հակառակորդներին՝ Մ. Ներսիսյանը փակում էր այդ գաղափարախոսությունը հայ ազատամարտի օրինաչափությունը հերքելու գործիքի վերածելու ճանապարհը և ընդգծում թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման հակաավատատիրական բնույթը՝ նրա մեջ նշմարելով միաժամանակ և՛ ազգային, և՛ սոցիալ-դասակարգային նպատակներ:

Թերևս այսօր կարելի է վիճարկել հայ ազատագրական շարժման մեջ երկու հիմնական հասարակական-քաղաքական ուժեր ու գաղափարախոսություններ, մի կողմից՝ հեղափոխական-դեմոկրատական և մյուս կողմից՝ բուրժուազգայնական հոսանքներ առանձնացնելու Մ. Ներսիսյանի փորձը: Կարելի է նաև պնդել, որ ազատագրական շարժումը շատ ավելի ընդարձակ հասկացություն է, քան նրա մարքսիստական՝ սոցիալ-դասակարգային տարբերակիչը: Բայց եթե մի կողմ թողնենք մման գաղափարախոսական պիտակավորումները՝ հաշվի առնելով ժամանակը և այն մթնոլորտը, որոնց մեջ գործում էր հեղինակը, պարտավոր ենք արձանագրել, որ Մ. Ներսիսյանը համարձակություն է ունեցել առաջինը գրիչ վերցնել խորհրդային ոչ այնքան բարյացակամ իրականության մեջ՝ ձեռք զարկելով հայ ազատագրական շարժումների ուսումնասիրությանը:

Բացի դրանից, հայտնի է, որ տիրապետող գաղափարախոսական սխեմաները անխաթար կերպով պահպանվում էին անգամ 1960-1970-ական թվականների խորհրդահայ առաջատար պատմաբանների աշխատություններում:

Մնայուն և խորապես ճշմարտացի արժեքներ պետք է համարել նաև Մ. Ներսիսյանի մշակած դրույթները հայերի ազատագրական պայքարի հանդեպ արևմտյան պետությունների վերաբերմունքի մասին: Մ. Ներսիսյանը բացահայտել է շարժման նկատմամբ վերջիններիս շահախնդրական քաղաքականությունը: Այսօր էլ այդ քաղաքականությունը միայն սեփական հետաքրքրությունների տեսանկյունից է նայում փոքր ժողովուրդների ազատագրական պայքարին: Մինևույն ժամանակ, Մ. Ներսիսյանը մերժում էր նաև օսմանյան բռնապետության դեմ պայքարը որպես արևմտյան տերությունների հինգերորդ շարասյուն որակող թուրքական պատմագրության տեսակետները:

Եվ վերջապես, Մ. Ներսիսյանի այս աշխատության մնայուն արժեքներից մեկը պետք է համարել հայ ազատագրական շարժման մեջ ի հայտ եկած ռուսական կողմնորոշման հայեցակարգի բովանդակության բացահայտումը: Անհերքելի փաստերով նա ցույց էր տալիս, որ այդ կողմնորոշումը ձևավորվել է անկախ

խորհրդային իրականությանը հատուկ այլևայլ հասկացություններից ու եզրույթներից, որոնք շրջանառության մեջ էր դրել մաս ինքը, ինչպես՝ «խորհրդային եղբայրական ընտանիք», ժողովուրդների «խկական ազատություն», քանի որ հայերը իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու մտահոգությամբ էին թուրքական բռնակալությունից ազատագրվելու հեռանկարը կապում Ռուսաստանի հետ:

1955-ին տպագրված Մ. Ներսիսյանի աշխատությունը վերահրատարակվեց նրա մահվանից հետո՝ 2002 թվականին⁴: Այստեղ արդեն հեղինակը իր ուսումնասիրության շրջանակները ընդլայնել-հասցրել է մինչև 1900 թվականը և առավել անկաշկանդ ու բազմակողմանի է ձևակերպել իր պատմագիտական մոտեցումները:

Հայ ազատագրական պայքարի հանդեպ իր դրական դիրքորոշումները Մ. Ներսիսյանն ամրապնդեց **Անդրանիկի** հերոսական կերպարի վերհանումով՝ 1965 թ. փետրվարի 25-ին, «Սովետական Հայաստան» թերթում⁵: Տասնամյակներով պարտադրված լռությունից հետո այս համարձակ քայլը ևս ուղեցնչային դարձավ խորհրդահայ պատմագրության համար: Հողվածում փաստորեն տրվում էր մեծ հայրենասերի և զորահրամանատարի գործունեության նորովի գնահատականը: Հետաքրքրական է, որ այս հողվածի հրապարակումից ուղիղ մեկ ամիս անց Մ. Ներսիսյանը «Պրավդա»-յում տպագրեց «**Տեղասպանությունը ծանրագույն հանցանք է՝ ուղղված մարդկության դեմ**» հողվածը՝ Ն. Ուշակովի համահեղինակությամբ⁶: Նույն թվականին, դարձյալ ռուսերենով, իր խմբագրած «Պատմա-բանասիրական հանդեսում» նա տպագրեց «**Արևմտահայերի ցեղասպանությունը 1915 թ.**»⁷ ուշագրավ հողվածը:

Իսկ մեկ տարի անց՝ 1966 թվականին, Մ. Ներսիսյանի խմբագրությամբ տպագրվեց «**Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ**»⁸ փաստաթղթերի և նյութերի ժողովածուն՝ ռուսերեն լեզվով: Ժողովածուի արխիվային փաստաթղթերի և նյութերի հիմնական մասը հրատարակության էր պատրաստել Մ. Ներսիսյանը, իսկ գրական նյութերը՝ Ռուբեն Սահակյանը:

Անվարան կերպով կարելի է պնդել, որ այս ժողովածուն իսկական հեղաշրջում առաջ բերեց Հայոց ցեղասպանության թեման ամբողջ ուժով հնչեցնելու և որպես կեսդարյա վաղեմության հիշողություն՝ վերստին երևակելու առումով ոչ միայն հայերիս, այլև խորհրդային մտավորականության լավագույն ներկայացուցիչների շրջանում: Ժողովածուին կցած առաջաբանում ցույց տալով հայերի իրավագուրկ և բռնադատված կացությունը օսմանյան Թուրքիայում, Մ. Ներսիսյանը ներկայացնում էր 1894-1896 թթ. թուրքերի կողմից կազմակերպված հայերի զանգվածային կոտորածներն ու 1909 թ. Կիլիկիայի հայության ջարդերը: Կանխելով Հայոց ցեղասպանությունը հերքող թուրք պատմաբանների ու քաղաքագետների «փաս-

4 Տե՛ս Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Եր., 2002:

5 Տե՛ս Ներսիսյան Մ. Գ., Ժողովրդական հերոսը (Զորավար Անդրանիկի ծննդյան 100-ամյակի առթիվ), «Սովետական Հայաստան», 1965, 25 փետրվարի:

6 Տե՛ս Нерсисян М. Г., Ушаков Н., Геноцид тягчайшее преступление перед человечеством, «Правда», 1965, 25 апреля.

7 Տե՛ս Нерсисян М. Г., Геноцид западных армян в 1915 году (к 50-летию геноцида армян), «Պատմաբանասիրական հանդես», 1965, N 2, էջ 55-60:

8 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Сост. Нерсисян М. Г., Саакян Р. Г., Е., 1966.

տարկները», նա մերկացնում էր երիտթուրքերի ստապատիր դատողությունները հայերի տարագրությունն ու արքայի պատերազմական պայմաններով թելադրված լինելու վերաբերյալ: Մ. Ներսիսյանը ցույց էր տալիս, որ այդ հրեշավոր կեղծիքը հերքվել է հենց նույն ժամանակներում՝ եվրոպական հրապարակախոսների և Թուրքիայում դիվանագիտական ծառայության մեջ գտնվող իրագեղականատեսների կողմից: Ավելացնենք, որ այս ժողովածուն նոր հուն էր բացում ոչ միայն հայոց ազգային ու հասարակական գիտակցության մեջ, այլև հայ պատմագիտության հետագա ընթացքի համար:

Ժողովածուի մեջ ներառված փաստաթղթերը կազմված են երկու մասից՝ հայերի կոտորածները Աբդուլ Համիդի ժամանակ (1876-1908) և հայերի զանգվածային կոտորածները երիտթուրքերի կողմից (1909-1918), որոնք ամբողջացնում են ցեղասպանության ժամանակագրական ընթացքը օսմանյան Թուրքիայում: Ժողովածուի որոշ նյութերի և փաստերի նկատմամբ Մ. Ներսիսյանը հանդես է բերել քննադատական մոտեցում: Առանձին փաստաթղթերի մեջ, որոնք վերաբերում են հատկապես Աբդուլ Համիդի ժամանակաշրջանին, նա նկատում է կոտորածների պատճառների ոչ հստակ, անգամ ոչ ճիշտ բացատրություններ, որոնցում գերազանցապես տրվում են «ամբոխի կրոնական մոլեռանդությունը» և քրդերի «թալանելու հակումները»: Մինչդեռ, Մ. Ներսիսյանի կարծիքով, այդ բոլոր բարբարոսությունների կազմակերպիչը եղել է թուրքական կառավարությունը՝ իր տեղական կառույցներով, որոնք XIX դարի վերջից իրականացրել են Հայոց ցեղասպանության պետական քաղաքականությունը:

Այս արժեքավոր ժողովածուի երկրորդ, լրացված հրատարակությունը լույս տեսավ 1982 թվականին⁹: Նրանում ժամանակագրական բաժանումները և նյութերի ու փաստաթղթերի խմբավորման անվանումները նույնն են մնացել, սակայն երկրորդ մասում լրացուցիչ ավելացվել են ավելի քան 100 փաստաթղթեր և նյութեր: Իր առաջարկում Մ. Ներսիսյանը սահմանել է Հայոց ցեղասպանության ժամանակագրությունը. «Երբ խոսքը վերաբերում է Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությանը, պետք է նկատի ունենալ ոչ միայն 1914-1918 թթ. համընդհանուր կոտորածները, այլև XIX դ. վերջի և XX դ. սկզբի զանգվածային ջարդերն ու կոտորածները»¹⁰, - գրում է նա: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հրատարակության դեպքում ժողովածուի նյութերի զգալի մասը վերցված են ռուսերեն, արաբերեն գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուներով առկա փաստաթղթերից: Դրանք հույժ արժանահավատ են՝ քաղված պաշտոնական աղբյուրներից, այլևայլ արխիվներից, և նրանց ստեղծման ժամանակը համընկնում է ցեղասպանության իրադարձություններին:

Ավելացնենք, որ այս վերահրատարակված ժողովածուն լույս տեսավ նաև հայերեն՝ 1991 թվականին¹¹, իրողություն, որի պահանջը վաղուց էր հասունացել և որը համահունչ եղավ Ղարաբաղյան շարժման մեջ ներքաշված մեր ժողովրդի պատմական պատկերացումների և հանրային մտքի ընդլայնման գործընթացին:

Օսմանյան Թուրքիայի՝ արևմտահայության նկատմամբ վարած թշնամական քաղաքականության, հայ ազատագրական շարժման, արևմտահայ մամուլի

9 St u Genocid arman v Osmanской империи. Сборник документов и материалов. Сост. Нерсисян М. Г., Саакян Р. Г., 2-е доп. изд., Е., 1982.

10 Նույն տեղում, էջ III:

11 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. Ներսիսյան Մ. Գ., Սահակյան Ռ. Գ., Եր., 1991:

պատմության հիմնահարցերին էր նվիրված Մ. Ներսիսյանի «**Հայ ժողովրդի նոր պատմության էջերից**»¹² տարբեր հոդվածներից կազմված աշխատությունը:

Այս գրքում թուզիկ շոշափված խնդիրներից մեկը՝ պատմության թուրք կեղծարարների քողագերծումը, շատ ավելի լայն ընդգրկումներով է իրականացված հեղինակի մյուս՝ «**Պատմության կեղծարարները**» ժողովածուում¹³, որն իր կենդանության օրոք տպագրված վերջին աշխատանքն է: Ժամանակագրական ընդգրկումով այն վերաբերում է արևմտահայության 1894-1922 թվականների պատմությանը: Գիրքն ունի բանավիճային բնույթ, ինչը թելադրված է նրանում առաջադրված հիմնահարցերի պատմագիտական հրատապությանը: Մ. Ներսիսյանն այստեղ ուշադրություն է դարձնում մեր պատմագիտության մեջ գրեթե ամբողջովին չհետազոտված՝ ցեղասպանությանը նախորդող ժամանակաշրջանի (1912-1914) հայ հասարակական մտքի բնութագրին: Վերահաս ողբերգությունը ուրվագծվում էր հայ գործիչների և ժողովրդի առջև՝ ի տես գավառներում սանձազերծված ոճրագործությունների շնեղմացող ալիքի: Հեղինակը վկայակոչում է մոտալուտ աղետի կանխագուշակումներով լեցուն՝ Կ. Պոլսի պատրիարք Հ. Արշարունու նամակները կաթողիկոսին, ինչպես նաև վերջինիս ուղղված՝ Երևանի, Թիֆլիսի, Ախալցխայի, Վանի, Բաղեշի և այլ քաղաքների բնակիչների ու ազգային կազմակերպությունների նամակները: Մամուլում ևս որոշ կոահումներ արվեցին առաջիկա արհավիրքի նախապատրաստությունների մասին: Այս իրողությունները ևս Մ. Ներսիսյանը աղերսում է պատմության կեղծարարների այն անհիմն տեսակետի հերքմանը, թե իբր՝ ցեղասպանության պատճառ են եղել 1914 թ. ստեղծված կամավորական ջոկատները և Վանի հայ բնակչության 1915 թ. ինքնապաշտպանական կռիվները: Նա վերահաստատում է այն ճշմարտությունը, որ իսկական պատճառներն էին «երիտթուրքերի պանթուրքիստական, զավթողական ծրագրերը, որոնք մշակվեցին դեռևս 1910-1911 թթ. և 1913 թ. սկսած վերածվեցին պետական քաղաքականության»¹⁴:

Այս գրքում Մ. Ներսիսյանն անդրադարձել է նաև հայ ազատագրական շարժման դեմ ուղղված այն ժխտական տեսակետներին, որոնք ի հայտ եկան մեր իրականության մեջ 1990-ական թթ. և շարունակում են շրջանառվել առ այսօր: «Երրորդ ուժի բացառման օրենքով» առաջնորդվող հեղինակներին Մ. Ներսիսյանն առարկում էր բռնապետության ուժի առջև ազատագրական շարժման անհամեմատ թուլության մասին փաստարկով, որն առանց օգնության ի վիճակի չէր թոթափելու բռնապետության ծանր լուծը:

Կարելի է կարծել, որ «Պատմության կեղծարարները» գրքում առանձնահատուկ կարևորություն ունի Չմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի վերաբերյալ գրված «**Մի բանավեճ Չմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին (Չմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ)**»¹⁵ հրապարակումը: Այստեղ Մ. Ներսիսյանը հիմնավորապես հերքում է Լորդ Կինրոսի «Աթաթուրք» աշխատության մեջ տեղ գտած այն կոպիտ աղավաղումը, ըստ որի՝ 1922 թ. սեպտեմբերին Չմյուռնիայում զոհված հույների և հայերի ընդհանուր թիվը հասնում էր ընդամենը 2000-ի (իրականում՝ 100.000-ի), և որ իբր՝ քաղաքի «համատարած հրդեհը ծագել է պատահաբար»: Կինրոսի գրքի

12 Տե՛ս Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Եր., 1982:

13 Տե՛ս Ներսիսյան Մ. Գ., Պատմության կեղծարարները, Եր., 1998:

14 Եզվ. աշխ., էջ 55:

15 Տե՛ս նշվ. աշխ., էջ 116-124:

այս կեղծիքին հակադրվել էր ամերիկյան «Թայմս» հանդեսը, նշելով որ հեղինակը բազմապատիկ չափերով նվազեցրել է գոհերի քիվը, ինչպես և այն, որ Չմյուռնիայի հրդեհին այդ օրերին ամենևին էլ պատահաբար չի առաջացել: 1965 թ. ապրիլին հարցին միջամտել էր Մոսկվայում հրատարակվող «За рубежом» շաբաթաթերթի աշխատակիցներից մեկը, որն իր հոդվածում փորձել էր ցույց տալ, որ Չմյուռնիան հրդեհել են ոչ թե թուրքերը, այլ «ինտերվենտները», հույները և հայերը: Այդ հոդվածի հեղինակը Չմյուռնիայի անկումը և թուրքերի ձեռքով նրա խաղաղ քրիստոնյա բնակչության անողորմ կոտորածը համարում էր թուրքական ազգային ազատագրական պայքարի ավարտ՝ ըստ էության կրկնելով թուրքական պատմագիտության վաղեմի կեղծիքները: Նույն թվականի մայիսին Մ. Ներսիսյանը, ինչպես ինքն է գրում, նամակով բողոքել էր խորհրդային շաբաթաթերթի այդ ամոթալի հոդվածի դեմ, որին միացել էր Հայաստանի ԳԱ պրեզիդենտ **Վիկտոր Համբարձումյանը:**

Մերկացնելով վերը նշված կեղծիքները, Մ. Ներսիսյանը միաժամանակ բացահայտում էր խորհրդային և հատկապես՝ ռուս խորհրդային պատմագիտության մեջ հարատևած այն նենգափոխումը, թե իբր Չմյուռնիան զավթել էին հույներն ու հայերը, որոնցից 1922 թ. սեպտեմբերին քաղաքն ազատագրեցին քեմալական «ազգային-ազատագրական» ուժերը: Այդ նենգափոխումն անհրաժեշտ էր հիմնավորելու համար Խորհրդային Ռուսաստանի կողմից քեմալականներին ցուցաբերված օգնությունը: Մինչդեռ իրականությունն այն էր, որ վերջիններս հրով ու սրով ջնջում էին իրենց կյանքն ու պատիվը պահպանելու համար ոտքի կանգնած ազգային փոքրամասնությունների դիմադրության վերջին օջախները:

Ամփոփելով, նշենք, որ դեռևս 1965 թ. Մ. Ներսիսյանի ներկայացրած բողոքը և Չմյուռնիայի 1922 թվականի ջարդերի 70-ամյակին նվիրված հրապարակման մեջ առկա ճշգրտումները վերստին ընդգծում էին համարձակ ու սկզբունքային գիտնականի քաղաքացիական կեցվածքը:

2005 թ. լույս տեսավ Մ. Ներսիսյանի ևս մեկ հետմահու աշխատություն՝ «**Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր**»¹⁶ ժողովածուն հայերեն և ռուսերեն լեզուներով: Այստեղ հարկ է առանձնացնել Հայոց ցեղասպանությունը ժխտելու թուրքական քաղաքականության դեմ ուղղված Մ. Ներսիսյանի երկու հրապարակումները՝ «**Անհերքելի փաստաթղթեր արևմտահայության ցեղասպանության մասին**» և «**Մուստաֆա Քեմալ փաշան արևմտահայերի 1915- 1916 թթ. ցեղասպանության մասին**»¹⁷ վերնագրերով:

Այս ամենը վկայում է, որ Մ. Ներսիսյանը մինչև վերջ մնացել է պատմեչի վրա՝ վերահաստատելով Հայոց պատմության համար կարևոր նշանակություն ունեցող ճշմարտությունները, որոնք ներկայումս՝ ականավոր պատմաբանի ծննդյան 100-ամյակի օրերին, համընթաց են մեր ժամանակի գաղափարաքաղաքական գործընթացների հոլովույթին:

THE COURAGEOUS AND PRINCIPLE SCIENTIST

On the 100-th Anniversary of the Academic Mkrtich Nersisyan

Albert A. Kharatyan

16 Տես Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Եր., 2005:

17 Տես նշվ. աշխ., էջ 85-108, 121-123: